| UFAR — Université Française en Arménie | Université de Lyon — Université Lyon III Jean Moulin | Université Toulouse III Paul Sabatier — Université de Toulouse |
| --- | --- | --- |

Հաստատվել է ՀՖՀՀ հոգաբարձուների խորհրդի 2023թ. հուլիսի 7–ի նիստում:/
This regulation was submitted for validation by the UFAR Board of Trustees on July 7, 2023 .

# Կանոնակարգ

## 2024-2025 ուստարվա Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) Master/ Մագիստրատուրա ընդունելության

# Admission Regulations

## for Master's degree program 2024-2025 of French University in Armenia (UFAR)

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296 « ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ » ՀԻՄՆԱԴՐԱՄ « UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE »

Սույն կանոնակարգը հաստատված է Հայաստանում ֆրանսիական համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից՝ համաձայն Ֆրանսիայի և Հայաստանի միջև համագործակցության համապատասխան համաձայնագրերի, համալսարանի կանոնադրության, ֆրանսիական համալսարանների հետ կնքած համագործակցության համաձայնագրերի և ՀՀ օրենսդրության պահանջների:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Հայաստանում ֆրանսիական համալսարան (այսուհետ՝ ՀՖՀՀ) ընդունելությունը կատարվում է ֆրանսիական և հայկական մագիստրատուրա / Master կրթակարգերում՝ համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից համալսարանին տրված կրթական գործունեության լիցենզիայով սահմանած մասնագիտությունների ու տեղերի:

1.2. ՀՖՀՀ մագիստրատուրա / Master կարող են դիմել.

1.2.1. Հայաստանում կամ արտերկրում հավատարմագրված բուհի կողմից շնորհված որակավորումը հավաստող բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ

This Regulation is validated by the Board of Trustees of the French University in Armenia, in accordance with the relevant cooperation agreements between France and Armenia, the Statute of the University, the cooperation agreements with partner French universities, and the provisions of RA legislation.

1. General Provisions

1.1. Admission to the French University in Armenia (hereinafter referred to as UFAR) is carried out in the French and Armenian educational systems for the Master's Degree / Magistros, based on the specialties and available places defined by the educational activity license issued by the Ministry of Education, Science, Culture, and Sports of the Republic of Armenia.

1.2. To apply for UFAR Master's Degree / Magistros program applicants must provide with:

1.2.1. Bachelor's Degree / Bakalavr, or specialist diploma, or Master's Degree, issued by an accredited university in Armenia or abroad, granting them the full cycle

մագիստրոսի դիպլոմ ունեցող ՀՀ քաղաքացիներ, որոնք կուտակել են բակալավրի կրթական աստիճանին համարժեք կրեդիտներ պահանջվող բնագավառի համար (180-240 ԿՓԵՀ կրեդիտ): Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում՝ մագիստրատուրայի մասնագիտությանը համապատասխանող բակալավրի որակավորմամբ:

1.2.2. Օտարերկրյա քաղաքացիներ, որոնք ունեն օտարերկրյա բուհի կողմից շնորհված որակավորումը հավաստող բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմ և կուտակել են բակալավրի կրթական աստիճանին համարժեք (180-240 ԿՓԵՀ կրեդիտ) կրեդիտ պահանջվող բնագավառի համար: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում՝ մագիստրատուրայի մասնագիտությանը համապատասխանող բակալավրի որակավորմամբ: Եթե օտարերկրյա դիմորդները բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում են ստացել այնպիսի բուհում, որը կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿՓԵՀ)՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքում

credits (180 or 240 ECTS credits) equivalent to a bachelor's degree in the required field /armenian candidates/. Bachelor’s degree / Bakalavr in line with the master’s specialty for the Faculty of Computer Science and Applied Mathematics.

1.2.2. Bachelor's Degree, or specialist diploma, or Master's Degree, issued by a foreign university, granting them the full cycle credits (180 ECTS or 240 ECTS) in the required field / foreign candidates/. Bachelor’s degree in line with the master’s specialty for the Faculty of Computer science and Applied Mathematics. If Bachelor's Degree, or specialist diploma, or Master's Degree is obtained from a foreign higher education institution that does not adhere to the ECTS (European Credit Transfer and Accumulation System), the recognition of diplomas can be carried out in accordance with the legislation of the Republic of Armenia and the Convention on the Recognition of Qualifications concerning Higher Education in the

կիրառվող ակադեմիական կրեդիտների հաշվարկման, կուտակման և փոխանցման համակարգի մաս չի կազմում, օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումները ճանաչվում և գնահատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության ու «Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին» կոնվենցիայի (Լիսաբոնի ճանաչման կոնվենցիա), այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն: Ճանաչումն ու գնահատումն իրականացնելու համար ՀՖՀՀ-ն կարող է դիմել ճանաչման իր գործառույթներում անկախ մասնագիտացված կառույցի, եթե այլ բան նախատեսված չէ ՀՖՀՀ կանոնակարգող փաստաթղթերով:

European Region (Lisbon Recognition Convention), along with international treaties concluded between the Republic of Armenia and foreign states in this field. To carry out the recognition and evaluation of diplomas UFAR may apply to an independent organization specialized in qualifications recognition, unless otherwise specified in UFAR regulatory documents.

1.3. Մագիստրատուրայում կրթությունը կազմակերպվում է 4 կիսամյակով, 2 ուսումնական տարի, թեև ուսանողը հնարավորություն ունի մագիստրոսական կրթության իր հետագիծը ձևավորել 3 ուսումնական տարվա ընթացքում: Սա

1.3. The Master's degree program is organized in 4 semesters, 2 academic years. Besides, students have the possibility to pursue their Master's degree over 3 academic years by submitting a written request to the UFAR Director of Studies.

իրականացնելու համար ուսանողը պետք է գրավոր դիմում ներկայացնի ՀՖՀՀ Ուսումնական գծով տնօրենին:

2. Ընդունելություն Մագիստրատուրա/Master

2.1. Ընդունելության մրցույթ

2.1.1. ՀՖՀՀ մագիստրատուրա / Master ընդունելությանը կարող են մասնակցել ներոգրյալ դիմորդները.

- ՀՖՀՀ շրջանավարտներ,
- ՀՀ այլ բուհերի շրջանավարտներ,
- Օտարերկյա քաղաքացիներ, որոնք բավարարում են սույն կանոնակարգի 1.2.2. ենթակետում մատնանշված պահանջներին:

2.2. Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

*Դիպլոմներ/վկայականներ*

ա. Հայաստանում հավատարմագրված բուհի կողմից շնորհված որակավորումը հավաստող բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմ,

բ. ֆրանսերենի իմացության վկայական՝ DELF B2, DALF: Երկու և ավելի տարվա վաղեմություն ունեցող վկայականի/դիպլոմի պարագայում,

2. Admission in Master’s /Magistros program

2.1. Entrance exam

2.1.1. Candidates eligible to participate in the entrance exam for the Master's/Magistros program include:

- UFAR Bachelor's degree graduates,
- Graduates with a Bachelor's degree from other Armenian universities,
- Foreign citizens, in accordance with the requirements of the provision 1.2.2 of this regulation.

2.2. Candidates must submit the following documents:

*Diplomas / certificates*

a. Bachelor's degree / Bakalavr diploma, or specialist diploma, or Master's degree issued by an accredited university in the Republic of Armenia,

b. French language proficiency certificate: DELF B2, DALF. In case the expiry date of the certificate or diploma is more than

ՀՖՀՀ-ն իրավասու է կազմակերպել ֆրանսերենի մակարդակը ստուգող հարցազրույց: Որոշ դեպքերում (օրինակ՝ ֆրանսիախոս երկրում ավարտած բուհ, որտեղ դասավանդման լեզուն ֆրանսերենն է, այլ) ֆրանսերենի իմացության վկայական կարող է չպահանջվել:

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում՝

ա. Հայաստանում հավատարմագրված բուհի կողմից շնորհված որակավորումը հավաստող բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմ,

բ. անգլերենի իմացության B2 մակարդակի (Cadre Européen Commun de Référence կամ դրան համարժեք) վկայական.

- IELTS ակադեմիական՝ 6,5 (առանց 6,0-ից պակաս բաղադրիչի)
- TOEFL՝ 79 և ավելի միավոր (եթե բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը 19-ից ցածր լինեն, վկայականը չի ընդունվելու)
- FCE (Cambridge Assessment English)

2 years ago, UFAR reserves the right to conduct an interview to assess the candidate's level of French proficiency. In certain cases, the French proficiency certificate is not required (for example: graduates from a university in a French-speaking country where the instruction is in French, etc.).

Diplomas/certificates required for the Faculty of Computer Science and Applied Mathematics:

a. Bachelor's degree / Bakalavr diploma, or specialist diploma, or Master's degree issued by an accredited university in the Republic of Armenia,

b. B2 level English proficiency diploma (Common European Framework of Reference or equivalent)

- IELTS Academic score of 6.5 (with a minimum of 6 points for each language skill)
- TOEFL score of at least 79 points (with a minimum of 19 points for each language skill; otherwise, the certificate will not be accepted)
- FCE (Cambridge Assessment English)

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296 UNIVERSITE FRANÇAISE EN ARMENIE

- CAE (Cambridge Assessment English)
- CPE (Cambridge Assessment English)
- BEC Higher (Cambridge Assessment English)

*Փաստաթղթեր*

ա. ինքնակենսագրություն ֆրանսերեն և հայերեն,

բ. անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր (ներառյալ պատճենը),

գ. գնահատականների ամփոփագիր/տեղեկագիր,

դ. դիպլոմի պատճեն,

ե. մոտիվացիոն նամակ (այլ բուհերից տեղափոխվելու, ֆակուլտետի փոփոխության, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ այլ դեպքերում),

զ. գրանցման ձևաթուղթ լրացված,

է. զինգրքույկ/զինվորական գրքույկ

ը. 1 լուսանկար 3 x 4,

թ. աշխատանքի վայրից տեղեկանք (հայցվող մագիստրատուրայի մասնագիտական ոլորտին վերաբերող պարտականությունների և գործառույթների մատնանշմամբ), եթե հայցվող մագիստրատուրան տարբերվում է ստացված բակալավրի կրթությունից,

ժ. ըստ անհրաժեշտության այլ փաստաթղթեր՝ այդ թվում նաև օտարերկրյա քաղաքացիների համար:

- CAE (Cambridge Assessment English)
- CPE (Cambridge Assessment English)
- BEC Higher (Cambridge Assessment English)

*Documents to be included:*

a. CV in French and Armenian,

b. Identification document: passport and a copy,

c. Transcript of grades,

d. Copy of diploma,

e. Motivation letter (in case of transfer from another university, change of faculty, other cases),

f. Fully completed registration form,

g. Military service record,

h. 1 photo 3 x 4,

i. Employment certificate (stating the candidate's obligations and tasks related to their field of activity), if their undergraduate degree is different from the applied Master's degree,

j. Other documents, if necessary, including for foreign candidates.

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296 UNIVERSITE FRANÇAISE EN ARMENIE

ի. Ընդունելության ծառայությունների համար գանձվող 25.000 ՀՀ դրամի վճարման անդորրագիր։

## 3. Ընդունելության գործընթացը և պահանջները

### 3.1. Ընդունելություն ՀՖՀՀ շրջանավարտների համար

ՀՖՀՀ շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է ըստ սույն կանոնակարգի դրույթների.

*3.1.1. Ընդունելություն ներկայացված փաստաթղթերի հիման վրա.*

ա. այն ուսանողները, ում ՀՖՀՀ հանձնաժողովի որոշմամբ շնորհվել է «Très Bien, Bien, Assez Bien» նշումներով որակավորում,

բ. «Passable» նշում ունեցող այն ուսանողները, ովքեր երրորդ և չորրորդ կուրսերում մասնագիտական առարկաներից ստացել են տասը և ավելի գնահատական։

*3.1.2. Ընդունելություն հարցազրույցի միջոցով.*

k. Payment receipt for the 25,000 AMD application fee.

## 3. Admission Conditions and Procedures

### 3.1. Admission of UFAR graduates

Admission to the Master's program for UFAR graduates is carried out in accordance with the provisions of this regulations.

***3.1.1. Admission based on application:***

a. Candidates who have obtained their diplomas with distinctions of " Très Bien, Bien, Assez Bien" following the deliberations of the UFAR jury,

b. Candidates who have obtained their diplomas with distinctions of " Passable " grade but have grades equal to or higher than 10 in the specialty subjects during the 3rd and 4th years of their Bachelor's degree.

***3.1.2. Admission based on interview:***

«Passable» նշում ունեցող այն ունեցողները, ովքեր չեն բավարարում վերոգրյալ պայմաններին, ընդունվում են հարցազրույցի միջոցով՝ ընդունող հանձնաժողովի որոշման հիման վրա:

Candidates who have obtained their diplomas with distinctions of "Passable" grade but do not meet the aforementioned condition are admitted based on an interview, based on the deliberations of the admission jury.

3.2. Ընդունելություն ՀՀ այլ բուհերի շրջանավարտների համար. նվազագույն պահանջներ

3.2.1. Բակալավրի որակավորում (180 կամ 240 ԿՓԵՀ կրեդիտ)՝ հայցվող մագիստրոսի մասնագիտության գծով: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում՝ մագիստրատուրայի մասնագիտությանը համապատասխանող բակալավրի որակավորմամբ: Եթե դիմորդները բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում են ստացել այնպիսի բուհում, որը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում կիրառվող ակադեմիական կրեդիտների հաշվարկման, կուտակման և փոխանցման համակարգի մաս չի կազմում, ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը ներկայացված պահանջներին

3.2. Admission of Graduates from Other RA Universities

The candidate must have:

3.2.1. Bachelor's Degree diploma (180 or 240 ECTS credits) relevant to the applied Master's program and Bachelor's Degree / Bakalavr consistent with the Master's specialty for the Faculty of Computer Science and Applied Mathematics. If the Bachelor's, specialist, or Master's degree is obtained from a higher education institution that does not adhere to the ECTS system (European Credit Transfer and Accumulation System), the recognition of the submitted documents is conducted by a Jury, chaired by the Director of Studies.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ՀԻՄՆԱԴՐԱՄ» UNIVERSITE FRANÇAISE EN ARMENIE FONDATION 01002296

| | |
|---|---|
| իրականացվում է հանձնաժողովի կողմից՝ Ուսումնական գծով տնօրենի նախագահությամբ: | |
| 3.2.2. Առնվազն 3 տարվա փորձ հայցվող մագիստրատուրայի մասնագիտության ոլորտում, եթե հայցվող մագիստրատուրան տարբերվում է ստացված բակալավրի կրթությունից: | 3.2.2. At least 3 years of experience in the field related to the relevant Master's program, if it differs from their undergraduate education. |
| 3.2.3. ֆրանսերենի իմացության վկայական՝ DELF B2, DALF: Իսկ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մագիստրոսական ծրագրերի համար անգլերենի իմացության վկայական (վկայականների ցանկը տե՛ս վերևում): Երկու և ավելի տարվա վաղեմություն ունեցող վկայականի/դիպլոմների պարագայում, ՀՖՀՀ-ն իրավասու է կազմակերպել ֆրանսերենի կամ անգլերենի մակարդակը ստուգող հարցազրույց: | 3.2.3. French language proficiency certificate, DELF B2 or DALF. For the Master's programs of the Faculty of IMA provide an English language proficiency certificate (see list of certificates above). If the certificate or diploma dates back more than 2 years, UFAR reserves the right to conduct an interview to assess the candidate's level of French or English proficiency. |
| 3.2.4. Ընդունելության ծառայությունների համար գանձվող 25.000 ՀՀ դրամի վճարման անդորրագիր | 3.2.4. Payment receipt for the 25,000 AMD application fee. |
| 3.2.5. Սույն կանոնակարգի 2.2. ենթակետում նշված փաստաթղթեր: | 3.2.5. Present all documents specified in paragraph 2.2. of this regulation. |
| 3.2.6. ՀՀ այլ բուհերից դիմած թեկնածուների համար կազմակերպվում է գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ստուգող թեստ (գրավորի և/կամ | 3.2.6. For candidates who applied from other RA universities, a knowledge, skills and ability assessment test (written and/or interview) is organized, which can be conducted |

հարցազրույցի ձևաչափով), որը կարող է իրականացվել համատեղ ՀՖՀՀ-ի և Jean Moulin-Lyon 3 համալսարանի կողմից: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեպքում՝ ՀՖՀՀ-ի և Թուլուզ 3 Պոլ Սաբատիե համալսարանի կողմից:

### 3.3. Ընդունելություն օտարերկրյա քաղաքացիների համար

Նվազագույն պահանջներ

3.3.1. Բակալավրի որակավորում (180 կամ 240 ԿՓԵՀ կրեդիտ)՝ հայցվող մագիստրոսի մասնագիտության գծով: Եթե օտարերկրյա դիմորդները բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում են ստացել այնպիսի բուհում, որը կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿՓԵՀ)՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքում կիրառվող ակադեմիական կրեդիտների հաշվարկման, կուտակման և փոխանցման համակարգի մաս չի կազմում, օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումները ճանաչվում և գնահատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության ու «Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը

jointly by UFAR and Jean Moulin-Lyon 3 University or in the case of Computer Science and Applied Mathematics Faculty, by UFAR and Toulouse 3 Paul Sabatier University.

### 3.3. Admission for Foreign Citizens

Application requirements:

3.3.1. Bachelor's degree (with 180 ECTS or 240 ECTS) in the specialization of the applied Master's program. If Bachelor's Degree, or specialist diploma, or Master's Degree is obtained from a foreign higher education institution that does not adhere to the ECTS (European Credit Transfer and Accumulation System), the recognition of diplomas can be carried out in accordance with RA legislation and the Convention on the Recognition of Qualifications concerning Higher Education in the European Region (Lisbon Recognition Convention), along with international treaties concluded between the Republic of Armenia and foreign states in this field. To carry out the recognition and

| | |
|---|---|
| վերաբերող որակավորումների ճանաչման մասին» կոնվենցիայի (Լիսաբոնի ճանաչման կոնվենցիա), այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն: Ճանաչումն ու գնահատումն իրականացնելու համար ՀՖՀՀ-ն կարող է դիմել ճանաչման իր գործառույթներում անկախ մասնագիտացված կառույցի, եթե այլ բան նախատեսված չէ ՀՖՀՀ կանոնակարգող փաստաթղթերով: | evaluation of diplomas UFAR may apply to an independent organization specialized in qualifications recognition, unless otherwise specified in UFAR regulatory documents. |
| 3.3.2. Առնվազն 3 տարվա փորձ հայցվող մագիստրատուրայի մասնագիտության ոլորտում, եթե հայցվող մագիստրատուրան տարբերվում է ստացված բակալավրի կրթությունից: | 3.3.2. At least 3 years of experience in the field of the applied Master's degree if it is different from the obtained Bachelor's degree. |
| 3.3.3. Ֆրանսերենի իմացության վկայական՝ DELF B2, DALF: Իսկ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերի համար անգլերենի իմացության վկայական (վկայականների ցանկը տե՛ս վերևում): Երկու և ավելի տարվա վաղեմություն ունեցող վկայականի/դիպլոմների պարագայում, ՀՖՀՀ-ն իրավասու է կազմակերպել ֆրանսերենի կամ անգլերենի մակարդակը ստուգող հարցազրույց: | 3.3.3. French language proficiency certificate, DELF B2 or DALF. English language proficiency certificate (see list of certificates above) for the Master's programs of the Faculty of IMA. If the certificate or diploma dates back more than 2 years, UFAR reserves the right to conduct an interview to assess the candidate's level of French or English proficiency. |

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

| | |
|---|---|
| 3.3.4. Որոշ դեպքերում (օրինակ՝ ֆրանսիախոս երկրում ավարտած բուհ, որտեղ դասավանդման լեզուն ֆրանսերենն է, այլ) ֆրանսերենի իմացության վկայական կարող է չպահանջվել: | 3.3.4. In some cases, the French language proficiency certificate is not required (for example: for a graduate of a university in a French-speaking country where the instruction is in French, etc.). |
| 3.3.5. Ընդունելության ծառայությունների համար գանձվող 25.000 ՀՀ դրամի վճարման անդորրագիր: | 3.3.5. Payment receipt for the 25,000 AMD application fee. |
| 3.3.6. Սույն կանոնակարգի 2.2. ենթակետում նշված փաստաթղթեր: | 3.3.6. Present all documents defined in the provision 2.2. of this regulation. |
| 3.3.7. Անկախ ընդունելության ձևաչափից, օտարերկրյա դիմորդների հայերենի իմացության մակարդակը պարզելու համար անցկացվելու է թեստ-հարցազրույց: | 3.3.7. Regardless of the admission procedures of the foreign candidate, a test-interview will be organized to assess the level of Armenian language proficiency. |

## 4. Մագիստրատուրա/Master 2 (1 տարով)

Մագիստրատուրա/Master 2-ի դիմումները ներկայացվում են նախանշված ժամկետներում և ուսումնասիրվում են հանձնաժողովի կողմից:

## 4. Admission to Master 2 (one-year program)

Applications for Master 2 must be submitted within the specified deadlines and are reviewed by the Jury.

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

## 5. Կարևոր դրույթներ

- ՀՖՀՀ մագիստրատուրայի դիմած թեկնածուների վերջնական ցուցակը սահմանում է ընդունելության հանձնաժողովը՝ ռեկտորի նախագահությամբ:
- Ընդունելության վերաբերյալ որոշումները տեղադրվում են UFAR կայքում:
- ՀՖՀՀ կողմից նախանշված վերջնաժամկետներից դուրս դիմումներ չեն ընդունվում:
- Թերի ներկայացված դիմումները չեն ուսումնասիրվում:
- ՀՀ այլ բուհերից ՀՖՀՀ ընդունված, ինչպես նաև օտարերկրյա ուսանողները կարող են ուսումնառության կրթաթոշակից օգտվել միայն երկրորդ կիսամյակից ի վեր :
- ՀՖՀՀ այն շրջանավարտները, ովքեր ՀՖՀՀ մագիստրատուրա ընդունվելիս ֆակուլտետ են փոխում, կարող են ուսումնառության կրթաթոշակից օգտվել միայն երկրորդ կիսամյակից ի վեր :

## 5. Important provisions

- The final list of UFAR Master's candidates is determined by the admission Jury, chaired by the Rector.
- All admission-related decisions are posted on the UFAR official website.
- Applications submitted after the deadline will not be accepted.
- Incomplete applications will not be processed.
- Students from other Armenian universities, as well as foreign students admitted to UFAR, can only benefit from the merit scholarship starting from the second semester.
- UFAR graduates who change faculties upon admission to UFAR's Master's program can only benefit from the merit scholarship starting from the second semester.

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296

6. Ընդունելության ժամկետները, գործերի ընդունում

- Մագիստրատուրայի ընդունելությունը փուլային է: Ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը զետեղվում է ՀՖՀՀ կայքում:

Ընդունելության համար նախատեսված ձևաթուղթը համապատասխան փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է մագիստրատուրայի պատասխանատուին առերես, առցանց, կամ ՀՖՀՀ կողմից կիրառվող այլ հարթակի միջոցով, որի մասին դիմորդները կտեղեկացվեն նախապես՝ ՀՖՀՀ կայքում զետեղված տեղեկատվությամբ:

6. Admission and application deadline

- Admission to the Master's program is organized through several phases. All relevant information about the dates is posted on the UFAR official website.

The application form, together with supporting documents, must be submitted to the Master's program coordinator in person, online, or through another platform used by UFAR. All the necessary information will be available on the UFAR official website.

ՀԻՄՆԱԴՐԱՄ FONDATION 01002296